# Կենցաղային յերգերի ժողովածու

կազմել է Հ. Ղարդանյանը

891.99-192
Կ-41

891.99-192
Կ-416

# ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՅԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

10936
38

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1934

II A1 2
Կ-780
562

2013

# ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՅԵՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

կազմեց ՀԱՅԿԱԶ ՎԱՐԴԱՆՅԱՆ

-2003

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1934

Գլխ. խմբագիր՝ Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Տ. ԽԱՉՎԱՆՔՅԱՆ
Սրբագրիչ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Պատվեր № 1568 Գլավլիտ № 8626
(բ) Հրատ. 3161 Տիրաժ 2000
Պետհրատի տպարան, Երևան

967-2009

-2009

# ՅԵՐԳ ԿԱՌՈՒ ՑՄԱՆ

Խոսք Գ. ՍԱՐՅԱՆԻ — Երաժշտ. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ



Յեղի՛ր անահ,
Մոռացի՛ր մահ
Կառուցման մեծ ճակատում,
Լսի՛ր, ահա
Ճամբիդ վրա
Նոր արևներ են ժպտում։

Քարը՝ քարի,
Կամքով արի,
Կառուցում ենք կյանքը մեր.
Նոր աշխարհի
Լույսը վառի,
Իմ բարեկամ, իմ ընկեր

Յեղի՛ր տոկուն
Թող քո հոգում
Հույսը յերբեք չմարի,
Ձեռքիդ դրած
Քո մի քարը
Հավասար ե մի դարի։



# ԿՈԼԽՈԶԱԿԱՆ ՅԵՐԳ

Խոսք ԳՈՒԳԱՐՈՒՆԻ

Յերաժշտ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ

Ուրախ




Ես ինչ անուշ յերգեր ունենք,
Նոր ու առատ բերքեր ունենք,
Պինդ ու ջլուտ ձեռքեր ունենք
Բյուր տավելիք խոսքեր ունենք։

Ես ինչ հզոր թա՛փ ունենք մենք,
Սոցմրցումի թա՛փ ունենք մենք,
Անծայրածիր տափ ունենք մենք,
Բրիգադների թա՛փ ունենք մենք։

Ես ինչ առատ բերք կա մեզ մոտ,
Սրտի անհուն յերգ կա մեզ մոտ,
Կոլխոզական հերկ կա մեզ մոտ,
Հարվածային ձեռք կա մեզ մոտ։

—



# ԿՌՎԻ ՅԵՐԳ

Խոսք ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆՈՒ

Յերաժշտ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ




Թո՛ղ վարդ բացեն հազար խոց ու վերք,
Թո՛ղ քամին սուլի միշտ մահվան քայլերգ։

Թո՛ղ մեր դեմ գոռան գետերը յեռուն,
Դափնի, իմ նժույգ ու թռիր հեռուն։

Երբ մենք հողերից քշենք թշնամուն,
Նորից խնդությամբ կդառնանք մենք տուն։

Իսկ յեթե ընկնեմ գնդակով դաժան,
Դարձյալ դու յեղիր ընկեր անբաժան։

Ու համբուրելով թաց աչքերը քո,
Թող մեռնեմ կարմիր դրոշի ներքո։

Թնդում է արդեն փողը պղնձի,
Ո՛, դոփի՛ր, դոփի՛ր, սևաբա՛շ իմ ձի։

---



# ՄԵՐ ՍԱՐԵՐԸ ՆՈՐԵԼ ԵՆ

Խոսք Խ. ԴԱՇՏԵՆՑԻ

Յերաժշտ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ




Տե՛ս, ի՛նչ սիրուն շարքերով
Ավտոները վազում են,
Մեր սարերը խաղում են,
Մեր սարերին սազում են։

Աղջի՛, Լուսի՛կ, դո՛ւրս արի,
Մեր սարերը նորել են,
Ավտոները գյուղ մտան,
Ձեն են տալիս ձորերը։

---

# ԿՈԼԽՈԶԱԿԱՆ

Խոսք՝ ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻ

Երաժշտ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

*Պարերգ*




Խորհուրդի դարն ենք բերել,
Տրակտորի վարն ենք բերել, բերել,
Ու չերկաթ, ելեկտրական
Կոլեկտիվ կյանք ենք բերել,

Տրակտոր ենք բերել,
Սոցիալիզմի դարն ենք բերել։



Ինչ կաթիլ ես, ծովումը չես,
Ինչ արմատ ես, որ հողումը չես, չես,
Դու ի՞նչ մարդ ես, ի՞նչ կոմունիստ,
Երբ որ կոլեկտիվումը չես։

Հողում չես, ծովում չես,
Կյանքում, կոլեկտիվում չես։

—

# ԿԱԼԻ ՅԵՐԳ

Խոսք ԳՐԱՇ Ի

Երաժշտ. Դ. ՑԵՂԻԱ ՋԱՐՑԱՆԻ






Ենքա՜ն աշխոր եմ արել,
Հացս բոլ-բոլ եմ արել,
Տես, խշխշան վարգ շորերս
Մեր գյուղկոոպից եմ առել։
Կոլխոզնիկ եմ, կալվոր եմ,
Աշխատանքի սովոր եմ...

Ջա՜ն, կալվոր, կալ եմ արել,
Կուլակին քար եմ արել,
Են թխադեմ հնձվոր տղին
Առել ինձի յար եմ արել։
Հարվածային կալվոր եմ,
Ամառն շոգին սովոր եմ...

Լուսը սարից ծեգում ա,
Ղուշը քարին յերգում ա,
Ա՛ մեր, կոլխոզ չես գալի՞,
Եդ ինչ թավուր թեքում ա։
Ջա՜ն, կոլխոզնիկ կալվոր եմ,
Սրտով նոր ու ավոր եմ...

# ՄԵՐ ՍԱՐԵՐԸ ՆՈՐԵԼ ԵՆ

Խոսք՝ ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑԻ
Երաժշտ.՝ ՏԵԼԵՄԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ




Տե՛ս, ի՜նչ սիրուն շարքերով
Ավտոները վազում են,
Մեր սարերը խազում են, } կրկնել
Մեր սարերին աազում են։

Ավտոն սարից ցած գնաց,
Արտից թռան լորերը,
Կակաչները կարմրած, } կրկնել
Գլուխները կորորեն։

Աղջի՛, Լուսի՛կ, դո՛ւրս արի,
Մեր սարերը նորել են,
Ավտոները գյուղ մտան, } կրկնել
Ջե՛ն են տալիս ձորերը։

# ՀՆՁԻ ՅԵՐԳԸ

«Մեծ ճանապարհից» պոեմից

Խոսք ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ — Երաժշտ. ՏԵԼԵՄԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ




Հնձի՛ր դու, հնձի՛ր մեքենա,
Յերգի՛ր մեր լեն դաշտերում,
Թող վոչ մի հասկ չմնա } կրկնել
Կոլխոզական արտերում։



Ցանք ենք արել մենք լիասիրտ՝
Բազուկներով կոլխոզի,
Հասցրել ենք մենք միասին, } կրկնել
Արևաշող ես վոսկին։

Եվ թող քրտինքը թափվի,
Թող յերկիրը լիանա,
Ամուր լինի մեր հիմքը, } կրկնել
Հնձի՛ր, հնձի՛ր մեքենա։

—

## ԻՄ ԿՅԱՆՔԸ ՔԱՐՈՏ ՃԱՄԲԱ

Խոսք ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻ

Երաժշտ. ԱՇՈՏ ՍԱԹՅԱՆԻ




Արևը զառ ա մանում,
Իմ յարը վար ա անում,
Մաշինի ձենից սաէս
Իմ սիրտը խաղ ա անում։

Արևը հողի վրա,
Մանում ա շողն իրա,
Կոմսոմոլ յարիս տված
Բարևը սրտիս վրա։



## ՄԱՅԻՍՅԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Խոսք ԱՎՐՈՐԱՅԻ

Երաժշտ. ԱՇՈՏ ՍԱԹՅԱՆԻ



Մտնում ենք մարտի ամեն առավոտ,
Ինչպես հերոսն է մտնում պայքարի.
Գործի լենք գնում անիվ ու մոտոր
Ու կամք, ու մկան անհաղթ վաշտերի։

Դե՛, յելլիր, կոմսոմոլիա,
Շարժվիր դեպ առաջ
Նոր հնգամյակի
Դիրքերը մտած։

Մայիսյան այս վառ, ծիծաղկոտ օրին,
Յերբ կյանքն է լցվում մի նոր թարմությամբ,
Յելնում ենք ահա, կրկին արշավի՝
Խրամ-առ-խրամ նետվելով առաջ։

Դե՛, յելլիր, կոմսոմոլիա,
Շարժվիր դեպ առաջ
Նոր հնգամյակի
Դիրքերը մտած։



ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библ.
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0466482

Գինը 75 կ

733

**Сборник бытовых песен**

Составил А. ВАРТАНЯН

ГИЗ ССРА, Эривань 1934